

ԼՂՀ-ում հաղկափն բաղնապատ պայմանների ստեղծումը

Տ.Ս. Հակոբյան

Հարկային քաղաքականության ներգործությունը տնտեսական գործընթացների վրա դրսևորվում է ազդեցության երկու հիմնական ձևերով.

- տնտեսական գործընթացներին ուղղակի ներգործություն,
- տնտեսական գործընթացներին անուղղակի ներգործություն՝ այդ գործընթացների վրա ազդող այլ լծակների ներգործությանը միջամտելու միջոցով:

Ունեութենների օգտագործման սահմանափակության և առաջնային պահանջմունքների ոչ լիով բավարարման պայմաններում, անցումային շրջանում գտնվող պետության բարեփոխումների իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է օտարերկրյա ներդրումներից, արտաքին տնտեսական կապերի զարգացման մակարդակից: Ուստի ԼՂՀ հարկային համակարգը պետք է կարգավորի ներպետական տնտեսական այն պայմանները, որոնք օժանդակում են օտարերկրյա կապիտալի հոսքին՝ արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ արտադրական ձեռնարկությունների համար տարբեր հարկատեսակների գծով արտոնությունների սահմանման (կախված օտարերկրյա կապիտալի կշիռից՝ ամբողջ կապիտալի նկատմամբ) և այլ գործիքների միջոցով: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ անցումային ժամանակաշրջան ապրող ԼՂՀ հարկային համակարգը նպատակահարմար չէ ծանրաբեռնել արտոնությունների բազմաթիվ տեսակներով, որը կարող է ոչ այնքան նպաստավոր, որքան «խառնաշփոթ» գործոն հանդիսանալ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ կապիտալի ոչ բավարար մակարդակի պայմաններում բարեփոխումների իրագործումը և կայուն տնտեսական աճի ապահովումը բավականին դժվար է ընթանում, և այլ երկրների եետ մրցակցության սատիճանը դեռ երկար ժամանակ ցածր է մնում: Ժամանակակից զարգացած պետությունները, ինչպիսին ԱՄՆ է, իրենց արմատական տնտեսական վերափոխումների շրջանում ուղղակիորեն կախված են եղել արտաքին կապիտալի ներգրավումից:

Այսպիսով, անցումային շրջանի տնտեսական վերափոխումների արդյունավետությունը մեծ չափով կախված է արտաքին ներդրումների ծավալներից: Ուստի ԼՂՀ առաջնային քայլերից մեկը պետք է լինի օտարերկրյա կապիտալի գործունեության օրենսդրա-իրավական բազայի ստեղծումը: Օտարերկրյա կապիտալի իրական հոսք ապահովելու համար բարենպաստ պայմանների ստեղծման գործընթացը ենթադրում է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների գործունեության համար հատուկ արտոնյալ տնտեսական մեխանիզմների մշակում: Այդ մեխանիզմներն ընդգրկում են արտասահմանյան ներդրումների ներգրավմանը նպատակաուղղված հարկային և ֆինանսավարկային արտոնությունների կիրառումը: Միևնույն ժամանակ, այս միջոցառումները պետք է համադրել գրանց տնտեսական նպատակահարմարության և երկրի հեռանկարային զարգացման հետ: Արտոնությունների տրամադրման գործընթացը պետք է իր մեջ ներառի օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ տնտեսական գործունեության իրականացումը ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից ստացած շահույթի նկատմամբ համեմատաբար ցածր հարկադրույթների կիրառում, նորաստեղծ արտասահմանյան և համատեղ ձեռնարկությունների հարկերից ազատման ժամանակի երկարաձգումը, ներմուծման գործարքները մաքսատուրքերից ազատելու և այլ օրենսդրա-իրավական ու տնտեսական բարենպաստ պայմաններ ստեղծող միջոցառումների իրականացումը: Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեության

ապահովումը օրենսդրա-իրավական և տնտեսական նորմերով, պետք է ուղղված լինի ձեռնարկության գույքային իրավունքների, ներդրումային գործունեության ապահովմանը:

Ինչպես հայտնի է պետական գնումների ափնացման քաղաքականությունը առավել ճկուն միջոց է տնտեսական ակտիվության խթանման համար, քան՝ հարկային ճնշման թուլացումը: Սակայն, ԼՂՀ-ում այս ռազմավարության ընտրությունը անհպատակահարմար է պետական բյուջեի միջոցների սակավության պատճառով:

Տնտեսության զարգացման նախապայմաններից է նաև արտադրության խթանումը: Արտադրական գործունեության համար անհրաժեշտ նախապայման է ֆինանսական միջոցների առկայությունը: Այդ միջոցների աղբյուրներ կարող են լինել վարկային միջոցները կամ արտադրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների սեփական ռեսուրսները: Անցումային շրջանը բնութագրվում է խնայողությունների և ներդրումների չափազանց անհավասարակշռությամբ, որը մեծ խոչընդոտ է եկամտների և ռեսուրսների վերաբաշխման գործընթացների համար: Հետևաբար, ԼՂՀ-ն պետք է որդեգրի ձեռնարկությունների վարկավորման ռազմավարությունը կամ բարենպաստ պայմաններ ստեղծի տնտեսվարող սուբյեկտների ինքնաֆինանսավորման համար:

Անցումային շրջանում, որեւէ տնտեսական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ են դրամական միջոցներ կամ կապիտալ, որոնց բացակայության փաստը հետաքրքիրության գերակշռող հատվածում պայմանավորված է ռեսուրսների ծայրահեղ անհավասարաչափ բաշխման հանգամանքով: Դիտարկելով տնտեսությունը, որպես ամբողջական համակարգ, բնական է այն պնդումը, որ տնտեսության զարգացման հիմքը արտադրությունն է: Տնտեսական կառուցվածքների միջև բնականոն հարաբերությունների ապահովումը երկրի բնական ռեսուրսների ներմուծումների հաշվին ու թե շուտ սպառում է իր արդյունավետությունը և խորը ճգնաժամիկ հաջորդող աշխուժացման միտումները, այս պարագայում, կարող են միայն թվագրող առաջնադասման տպավորություններ ներշնչել: ԼՂՀ-ում ներկայումս տիրող տնտեսության տարբեր ճյուղերի մոնապոլացման գործընթացի կանխմանը ուղղված արմատական միջոցառումները ենթադրում են հաշվաճանաչողության լծակների կիրառումը: Հարկային քաղաքականության դերը այս ուղղությամբ արտացոլվում է նոր ձևավորվող տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար հարկային բարենպաստ պայմանների ստեղծումով:

ԼՂՀ ներկա տնտեսական վիճակի ուռամասնորությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության, շինարարության, արդյունաբերության բնագավառներում զարգացման մեծ պոտենցիալ գոյություն ունի: Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար գյուղացին հարկատեսակներից վճարում է միայն հողի հարկը, սակայն եթե ափնացնենք հողի մշակման, ջրելու և այլ բազմաթիվ ծախսեր (որոնք տնտեսվարող սուբյեկտի տնտեսկունից կախվի է դիտարկել որպես հարկեր), ապա պարզ կդառնա, թե ինչպիսի ծանր վիճակում է գյուղացին այսօր: Նախկին տարիների փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ոլորտում արտադրական մեծ պոտենցիալի օգտագործումը լուրջ խոչընդոտների է հանդիպում կապված տնտեսվարող սուբյեկտների անվճարունակության, արտադրության ժամանակակից միջոցների բացակայության հանգամանքներով և, դրանով պայմանավորված՝ տնտեսական ակտիվության կասեցմամբ: Գյուղատնտեսության ոլորտում զրազմածների չնչին տոկոսն է միայն, որ կարող ենք ունենալ իր ստացած շահույթի հաշվին արտադրություն ընդլայնելու նպատակով ձեռք բերել արտադրության լրացուցիչ միջոցներ: Իսկ եթե ամսությունը ստանձնի այն գործառնությունը, որը ենթադրում է

տեխնիկայի, վառելիքի, լրացուցիչ հողատարածքների արտոնյալ պայմաններով տրամադրում՝ բերքահավաքից հետո միայն փոխհատուցում ստանալու ակնկալիքով, ասես գյուղատնտեսության զարգացման բնական ընթացքը միանգամից մի քանի տարով առաջ կընկնի: Ամենապարզ հաշվարկներն անգամ ցույց են տալիս, որ նթե արտոնյալ պայմանների ստեղծման շնորհիվ արտադրության ծավալներն աճեն 10 անգամ, ապա հարկի դրույքաչափը 2 անգամ փոքրացնելու դեպքում այդ հարկատեսակից ստացվող մուտքերը կաճեն 5 անգամ: ԼՂՀ կողմից ստացված բազմաթիվ ոչ նպատակային վարկերը կարելի է օգտագործել գյուղատնտեսության բնագավառում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար բարենպաստ պայմանների ստեղծման ուղղությամբ: Այդ բարենպաստ պայմանները ենթադրում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրության բնագավառում արտադրության համար անհրաժեշտ միջոցների՝ տեխնիկայի, սարքավորումների, արտոնյալ երկաթածամկե տ վարկերի տրամադրում, ինչը կնպաստի լրացուցիչ հողատարածքների օգտագործմանը, արտադրության ծավալների աճին և այլն: Պետության կողմից գյուղատնտեսությունում այսպիսի արտոնյալ պայմանների ստեղծումը հնարավորություն կտա հետագայում ունենալ հարկման սուբյեկտներ, որոնք կանոնավոր կերպով հարկեր են վճարում պետությանը և միաժամանակ փոխհատուցում են իրենց տրամադրված արտոնյալ պայմանների հետ կապված պետության կողմից կատարված ծախսերը: Փաստորեն, պետությունը այնպիսի պայմաններ է ստեղծում, որոնք տնտեսվարող սուբյեկտներին խթանում են զբաղվել տվյալ գործունեությամբ, իսկ հետագայում ապահովում են այդ գործունեությունն իրականացվելուց հրաժարվելու աննպատակահարմարությունը: Կարևոր հանգամանք է այն, որ տնտեսվարող սուբյեկտի հեռանալու դեպքում, տվյալ գործունեությամբ զբաղվելու համար բազմաթիվ հավակնորդներ գոյություն կունենան, որոնք կստանան նախկին սուբյեկտի բոլոր պարտավորությունները: Պետության կողմից իրականացվող այս քաղաքականությունը կիրառելի է տնտեսական գործունեության ցանկացած բնագավառում, սակայն ոչ բոլոր բնագավառներում միաժամանակ: Պետության տնտեսական քաղաքականության իրականացման այս ուղղությունը, մեր կարծիքով, կհանգեցնի բազմաթիվ խնդիրների լուծմանը, այն է.

- լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման շնորհիվ գործազրկության մակարդակի կտրուկ անկմանը,
- տնտեսական գործունեության ծավալելու համար բարենպաստ դաշտի ձևավորման միջոցով արտադրության տեմպերի զգալի աճին,
- տնտեսական զարգացման տեմպերին զուգահեռ՝ արտաքին շուկայում հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացմանը,
- արտաքին շուկայում մրցակցելու հոսանքներով պայմանավորված՝ ԼՂՀ-ում համապետական ձեռնարկությունների ստեղծմանը, արտասահմանյան ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների ներգրավմանը, գիտական փորձի փոխանակմանը,
- շահութառաքելի «բեռք» եկամտահարկին փոխանցելու ռազմավարությունը ստանձնելով՝ արդեն իսկ ձևավորված արտադրական գործընթացի արագացման և սոցիալական անհավասարակշռվածության առտիճանի նվազեցման:

Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում, վերոհիշյալ միջոցառումների իրականացման անհրաժեշտ պայման է հանդիսանում պետության կողմից իր տնօրինության տակ որոշակի միջոցներ ունենալու հանգամանքը: Այս պայմանի բավարարումը պայմանավորված է տնտեսական քաղաքականության տարբեր

բնագավառների փոխակալվածությունը և դրանց մեկը մյուսին օժանդակելու ինտրավերությունը՝ արտահայտված սովերային տնտեսության ծավալների կրճատմանը, պետական փողերի յուրացման բացառմանը, պետական բյուջեից ֆինանսավերվող սուբյեկտների կողմից պետական միջոցների ըստ նպատակի օգտագործմանը, ինչպես նաև նոր հարկաւորների ստեղծմանը ուղղված միջոցառումների համակարգով: Սովերային տնտեսական գործունեությամբ զբաղվողների նկատմամբ պատժամիջոցների ուժեղացումը և զուգահեռաբար իրականացվող հարկային բեռի թեթևացումը արտադրության բնագավառում կիսնգնքի հարկման սուբյեկտների բազմության ընդլայնմանը՝ պետության հարկային մուտքերի հանրագումարը չխախտելով: Այսպիսով, մեր կարծիքով, իր զարգացման հեռանկարային ռազմավարության ուղին ընտրելով, կառավարությունը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որոնք կապահովեն հարկման սուբյեկտների կողմից եկամուտների մի մասը թաքցնելու անհատական արմատությունը: Սովերային տնտեսությունը իր էությամբ պոստնեցիալ հարկային մուտքերի հանրագումարի մասն է: Մեր կարծիքով, սովերային տնտեսության ղեկ ուղղված կարևորագույն միջոցառումներից է անկանխիկ հաշիվների կիրառման ընդլայնման քաղաքականությունը:

Ժամանակակից զարգացած պետություններում սովերային տնտեսության ծավալների փոքր լինելու հանգամանքը պայմանավորված է հիմնականում տնտեսական գործադրություն կանխիկ գործառնությունների գրեթե բացակայության փաստով: Մեր հանրապետությունում անկանխիկ շրջանառության կիրառելիության ցածր աստիճանը, մեր կարծիքով, պայմանավորված է ոչ պետական բանկերի նկատմամբ հասարակության կողմից իրականացվող գործառնությունների ճկունության բացակայության, բանկային համակարգի թերզարգացած լինելու հանգամանքով: Մեր կարծիքով, բանկային համակարգում պետական մրցակցության մեծացման և պետական ներաշխիքների սրման միջոցով հնարավոր կլինի ինչպես ընդլայնել բանկային համակարգի վրա պետության ազդեցության շրջանակները, այնպես էլ ներաշխիքներ վճարման գործառնությունները բանկային համակարգի միջոցով իրականացնելու հուսալիությունը: Բանկային համակարգի զարգացմանը զուգընթաց՝ հետազայում հնարավոր կլինի առտիճանաբար հրաժարվել պետության կողմից բանկային համակարգի վրա արհեստական միջամտություն ցուցաբերելու քաղաքականությունից՝ ապահովելով այդ գործընթացի անընդհատությունը՝ սահմանված որոշակի պայմաններին բավարարող ոչ պետական բանկերի գործունեությունը պետական ներաշխիքներով ապահովելու և այլ միջոցառումների կիրառման շնորհիվ: Մեր հանրապետությունում տնտեսական ակտիվության ցածր մակարդակի հիմնական պատճառներից մեկը օլիգոպոլիստական շուկաների գերակշռության փաստն է, որի գոյությունը անխառնողելի է անցումային շրջանում՝ պայմանավորված եկամուտների վերաբաշխման խիստ դիֆերենցված լինելու հանգամանքով: Պետության կողմից տնտեսական համակարգում բարենպաստ պայմանների ստեղծումը ներկա ժամանակաշրջանում պետք է ուղղված լինի տնտեսության ճեղքվածքների «վերանորոգմանը», մրցակցության համար բարենպաստ պայմանների ձևավորմանը: Այս ուղղությամբ, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է ուղղակի հարկերին գերակայություն շնորհելու ռազմավարությունը:

Չնայած այն հանգամանքին, որ հարկային բարենպաստ պայմանների ստեղծումը և հարկային արտոնությունների սահմանում ծառայում են նայն նպատակին՝ հարկային ճնշման թուլացմանը, այնուամենայնիվ, այս միջոցառումների կիրառման ուղղությունները խիստ տարբերվում են միմյանցից: Բարենպաստ դաշտի

ստեղծումը ենթադրում է տնտեսական գործունեություն ծավալելու համար ընդհանուր բարենպաստ մթնոլորտի ստեղծում, իսկ հարկային արտոնությունների կիրառումը ուղղված է հիմնականում կոնկրետ տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ կիրառված պատժամիջոցներից ազատմանը, այս կամ այն հարկատեսակի գծով՝ հարկման օբյեկտի կամ հարկի նվազեցմանը, և այլն: Հարկային արտոնությունների դերը առավել մեծ է անցումառային շրջանի նախնական փուլում, երբ տնտեսական սուբյեկտների միջև գոյություն ունեցող հարաբերություններում առաջացած ճեղքվածքի պատճառով ի հայտ են գալիս այդ սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների անկատարելիության բազմաթիվ դեպքեր: Անվճարունակ ձեռնարկությունների նկատմամբ հարկային արտոնությունների տրամադրման կիրառումը իր էությամբ հանդիսանում է հարկային բարենպաստ դաշտի ստեղծման առաջնային փուլը, սակայն արտոնությունների տրամադրումը նպատակ է հետապնդում բարելավել կոնկրետ սուբյեկտի տնտեսական վիճակը և հիմնված տնտեսության այս կամ այն բնագավառի զարգացման գործընթացում այդ սուբյեկտի ներգործության աստիճանը հաշվի առնելու սկզբունքի վրա: Մյուս կողմից, հարկային օրենսդրության պարզության սկզբունքից ելնելով, մեր կարծիքով, հարկային բարենպաստ դաշտի ձևավորմանը զուգընթաց, հարկավոր է հնարավորինս բացառել այս կամ այն սուբյեկտի արտոնություն տրամադրելու սլավտիկան: Հարկային արտոնությունների կիրառելիության աստիճանը կախված է հարկային բարենպաստ պայմանների ձևավորման և տնտեսական ակտիվության աստիճանից: Մակաբն այս գործընթացների իրականացման նպատակահարմարությունը անմիջականորեն կախված է պետական բյուջեի մուտքային մասի հազնեցվածության աստիճանից: Այսպիսով, տնտեսական գործունեություն ծավալելու համար բարենպաստ պայմանների ստեղծման գործընթացը նախնական շրջանում պահանջում է պետական բյուջեում լրացուցիչ միջոցների կենտրոնացում: ԼՂՀ-ում գոյություն ունեն բյուջեի լրացուցիչ մուտքեր ապահովելու բազմաթիվ աղբյուրներ: Նախնառաջ՝ ուսումնասիրենք մեր երկրի եռվա սեզոնը տնտեսական իրավիճակում նոր հարկատուների ստեղծման հնարավոր ուղղությունները: Սոցիալական անհավասարակշռվածությունը բացահայտող ամենաակնառու ցուցանիշը հասարակության տարբեր շերտերի սպառման մակարդակն է: Այս առումով մի շարք ապրանքների և ծառայությունների ձեռք բերման նկատմամբ իմաստավոր ենք համարում համապատասխան հարկերի կամ տուրքերի ներդրումը: Այդպիսիք կարող են հանդիսանալ, օրինակ՝ բջջային հեռախոսների, արտասահմանյան թանկարժեք ավտոմեքենաների, գաբղեղների ոլորտ տնտեսների և հասարակության համեմատաբար անապահով խավերի սպառողական զանբյուրում տեղ չգտած այլ ապրանքների ու ծառայությունների ձեռք բերումները: Նույնիսկ ամենահամեստ հաշվարկները ցույց են տալիս նման միջոցառումների կիրառումից ավելավորող իրական արդյունքները: Պետության այս եկամուտը ամենևին չի ենթադրում դրա լրիվ ընդգրկումը գույքահարկի մեծության մեջ: Այն կարող է սահմանվել հաստատագրված վճարների տեսքով: Պետական բյուջեի մուտքային մասի համալրման գործընթացում, բացի նոր հարկատուների ստեղծման և ստվերային տնտեսության դեմ ուղղված միջոցառումներից, գոյություն ունեն նաև այլ բազմաթիվ լծակներ, որոնցից ոչ պակաս նշանակություն ունի տնտեսվարող սուբյեկտների և պետական բյուջեի միջև փոխադարձ ակտիվ միջոցով պարտքերի մարման՝ հաշվառումների, կասեցումը: Հաշվառումների բացասական ներգործությունը մեր տնտեսության վրա դրսևորվում է հետևյալ երևույթներով.

- նախորդ տարիներին ձեռնարկությունների միջև առաջացած պարտքային հարաբերությունները արտացոլվում են տվյալ ժամանակաշրջանում պետական բյուջեի կատարման ընթացքի վրա,
- խախտվում են բյուջեից պետական սուբյեկտների ֆինանսավորման համաժամանակությունները,
- խախտվում է պետական բյուջեի մասին օրենքներով պաշտպանված հոդվածների (աշխատավարձ, պաշտպանության ծախսեր, դեղամիջոցների ձեռք բերման ծախսեր, երեխաներին տրվող նպաստներ և այլն), առաջնային և լրիվ չափով ֆինանսավորման պայմանի ապահովումը,
- բարենպաստ պայմաններ են ստեղծվում կնոժ փաստաթղթերի միջոցով բյուջեից գերավճարների վերադարձման, բյուջեից իրականացվող հատկացումների ոչ նպատակային օգտագործման համար:

Այսպիսով, մեր կարծիքով, տնտեսական քաղաքականության ուղղվածության ներքո, հարկային քաղաքականության թափամալարությունը ներկա ժամանակաշրջանում առավել արդյունավետ կդրսևորվի արտադրության բնագավառներում հարկման սուբյեկտների բազմության ընդլայնման, այդ սուբյեկտների կողմից իրականացվող տնտեսական գործունեության նկատմամբ հարկային ճշման թուլացման պայմաններում գույքահեռաբար իրականացնելով սովորաբար տնտեսության ծավալների նվազեցմանը ուղղված միջոցառումներ, ոչ արտադրական ոլորտում ձևավորելով նոր հարկատուների բազմություն, ապօրինի գործունեության նկատմամբ կիրառելով համապատասխան պատժամիջոցներ, կամ օրինականացնելով գործունեության այդ տեսակները՝ համապատասխան սահմանված հարկերի, տուրքերի և այլ վճարումների կիրառման միջոցով: Այս գործընթացների պրակտիկ իրականացման համար նախապայմաններ ստեղծելու թափամալարության հիմք է հանդիսանում հարկման օբյեկտների, սուբյեկտների, հարկային դրույքաչափերի կարգավորման համակարգի նվազակառուցվածքների միջև առավել բարենպաստ հարաբերակցության որոշումը:

Հարկման սուբյեկտների բազմության ընդլայնման և դրույքաչափերի խզման համամասնությունների որոշումը պահանջում է խոր հետազոտությունների գործընթաց, սակայն ակնհայտ է, որ այդ համամասնությունների հնարավոր տարբերակներից համեմատաբար նպատակադրի հայտնաբերման և կիրառման դեպքում մեր հանրապետությունում կբարձրանա տնտեսական ակտիվության աստիճանը և դրանով պայմանավորված հարկային մուտքերը էականորեն կաճեն:

Յուրաքանչյուր պետություն իր տնտեսական քաղաքականությունը իրականացնում է գործող օրենքներով և դրանցով առաջնորդվող համապատասխան պետական մարմինների միջոցով, իսկ օրենքը ընթացքում և պահանջում է պետական իշխանության բարձրագույն մարմինների կողմից վավերացված վարքագծի կամ փոխհարաբերությունների որոշակի համակարգի ապահովում: Այս պարագայում հատկապես սոցիալ-տնտեսական և իրավական բարեփոխումների ճանապարհին մեծ տեղ է հատկացվում հարկային մարմիններին՝ որպես ֆինանս-իրավական նրաշխավորի:

Շուկայական տնտեսության անցման և արմատավորման գործընթացը [1, 2-ում] արդյունավետ հարկային քաղաքականության խնդիրներն ու նպատակներն իրականացվում է հարկային պետական մարմինների կողմից: Հանդիսանալով նոր կազմակերպված պետական մարմին, ինչպես նաև պետության կողմից օժտված լինելով հարկային օրենսդրության բնագավառում հսկողական գործառնությունով, [1, 2 հարկային վարչությունն իր տարածքային ստորաբաժանումների հետ միասին, ստանձնեցին բարդ և պատասխանատու խնդիր՝ հարադրական

հարաբերությունների ընդգրկումն մի շրջանակի իրավական կարգավորման պատասխանատվությունը:

ԼՂՀ հարկային վարչության կարևորագույն խնդիրն է՝ հարկատուների կողմից հարկային օրենսդրության ճշգրիտ հասկացման, հարկերի և այլ վճարումների գումարների հաշվառման, պետական բյուջե ժամանակին և ամբողջական վճարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Համակարգի ստորին օղակի հարկացյին մարմինները իրականացնում և միջազգային փոխադրություն հարկատուների հետ՝ որոշակի գործառնություն միջոցով:

ԼՂՀ հարկային վարչության ստորին մակարդակի ստորաբաժանումներն են՝

1. հարկատուների հաշվառումը (ըստ կատեգորիաների, ըստ տարածքային հարկման եղանակների, հարկերի տեսակների, ըստ գործունեության այլ),
2. հարկացյին փաստացի մուտքերի հաշվառումը (ըստ հարկային կատեգորիաների, տարածքների, հարկերի տեսակների, ըստ գործունեության, ըստ բանկերի),
3. հարկերի փաստացի դիմամիկայի վերլուծություն,
4. պետական կառավարման մարմիններին հարկային վճարումների վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովում,
5. հարկային համակարգի գործունեության կառավարող գործունեություն (օրենսդրական նախաձեռնություն, մեթոդական մշակումներ տեղեկատվական ապահովում, իշխանության մարմինների հետ համագործակցումը հարկային օրենսդրությանը վերաբերող հարցերով),
6. հարկատուների տեղեկատվական ապահովումը հարկային օրենսդրության և նրանց հարկային համակարգի պարզաբանմամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հարկային քաղաքականությունը պայմանավորված է ստորաբաժանել հետևյալ փուլերի.

1. ԼՂՀ հարկային համակարգի ձևավորման սկզբնական փուլը, որն ընդգրկում է 1992-1995 թվականներն ընկած ժամանակահատվածը: Այս ընթացքում ԼՂՀ Գերագույն հորինողի որոշմամբ ԼՂՀ տարածքում գործողության մեջ մտան հարկային ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: Իսկ դրանից հետո, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ մտան «Հարկերի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Անկախության հարկի մասին», «Եկամտահարկի մասին» և «Շահութահարկի մասին» օրենքները և բազմաքանակ ենթաօրենսդրական ակտեր:

Ուսումնասիրված պատերազմական գործողությունների պայմաններում ԼՂՀ կառավարության առջև դրված էին մի շարք լուրջ խնդիրներ, որոնցից արժե հիշատակել տնտեսավարող սուբյեկտների գործունեության խիստ հաշվառումը, ՀՀ օրենքներով համապատասխան ստեղծման հարկադրանքներն հիմնական բազաների ապահովումը (շահույթ, իրացման ծավալներ, ֆիզիկական անձանց եկամուտներ) և այլն: Երկրորդություն ՀՀ-ի, հողի հարկը և գույքահարկը ԼՂՀ-ում ներդրվեցին մի փաթեթով՝ 1995 թվականին:

2. Հարկային համակարգի զարգացման երկրորդ փուլն ընդգրկեց 1995-1999 թվականները: Այդ ժամանակահատվածում պատերազմական գործողությունները հիմնականում կարելի էր համարել ավարտված և ԼՂՀ

իշխանությունները ինտենսիվորեն սկսեցին տնտեսական արմատական բարեփոխումները: Սկսած 1995 թվականից հանրապետությունում ներդրվեցին ևս երկու նոր հարկատեսակներ՝ հողի հարկը և գույքահարկը: Ըսկան փոփոխությունների ենթարկվեցին ավելացված արժեքի մասին, ակցիզային հարկի և եկամտահարկի օրենքները: Դրա հետ մեկտեղ, ԼՂՀ կառավարությունը համապատասխան որոշումների համաձայն՝ ներառվեցին մի շարք նոր հարկազանձումներ ու պարտադիր վճարումներ, մասնավորապես՝ ավտոճանապարհների պահպանման ու վերանորոգման գծով հատկացումները, բնական ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման տուրքերը և այլն:

Մասնավոր ձեռներեցների համար ներդրվեցին նշանակալային նվազագույն անդամվճարներ, իսկ 1997 թվականից սկսած առևտրական գործունեություն իրականացնելու նպատակով ԼՂՀ իշխանությունների կողմից ներդրվեց հաստատագրված վճարումների համակարգը:

Այս փուլի ավարտին բուռն թափ ստացավ հողի սեփականաշնորհման, փոքր ձեռնարկությունների և պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացները, որոնք իրենց հերթին հիմք հանդիսացան հարկման մեխանիզմի իրավական բազայի կառուարելագործման, ինչպես նաև, ընդհանուր առմամբ՝ հարկային քաղաքականության օրենսդրա-իրավական ապահովվածության համար:

3. Ի վերջո, հարկային համակարգի զարգացման երրորդ փուլը պայմանականորեն կարելի է համարել 1999-2000 թվականները, երբ սկսվեց այսպես կոչված ազատականացված հարկազանձման ջեժիմը: Դա առաջին հերթին իր արտացոլումը ստացավ շահույթահարկի հարկազանձման դրույքի նվազման մեջ և 2000 թվականի հունվարի 1-ից բոլոր վճարողների համար սահմանվեց միասնական 15%: Բացի այդ, ներառվեցին հարկային մի շարք նորարարություններ և արտադրություններ: Այսպես՝ 25 մլն դրամի չափով կանոնադրական կապիտալի համալրման դեպքում ձեռնարկությունն առաջիկա երկու տարիներին ամբողջությամբ ազատվում է շահույթահարկից: Ավելացված արժեքի հարկի շրջանառության չհարկվող միևնույնը հասցվեց մինչև 10 մլն դրամ, իսկ ամբողջական պարբերաշրջան անցած գյուղատնտեսական ապրանքները, ինչպես նաև ալյուրի ու հացի իրացման գործընթացները ազատվեցին ավելացված արժեքի հարկի վճարումից: Տեղական ապրանքարտադրողների համար սահմանվեցին մոտ կրկնակի անգամ ցածր ակցիզային հարկի դրույքաչափեր: Իսկ ֆիզիկական անձանց գծով սահմանվեց եկամտահարկի միասնական, համամասնական դրույքաչափ՝ սկզբում 15%, իսկ 2001 թվականի հունվարի 1-ից՝ 5%:

Տնտեսական բարեփոխումների այս ժամանակաշրջանում հարկային մարմինների առջև ծառացած խնդիրների բազմազանությունը և բարդությունները ենթադրում ու պահանջում են աշխատանքների առավել հստակ կազմակերպում և կոորդինացում: Աշխատանքների պլանավորումը, ԼՂՀ առանձին վարչատարածքային միավորներում, հարկային օրինականության վիճակի վերլուծությունը, հարկ վճարողներին օրենքով սահմանված իրենց իրավունքների և պարտականությունների հետ ծանոթացումներն ու պարզաբանումները, իրականացվող ստուգումների հիմնավորվածությունն ու կազմակերպվածությունը, այս բնագավառում կադրերի ճիշտ ընտրության և տեղաբաշխման հարցերը, հարկային ոլորտում գործող օրենսդրության շարունակական կատարելագործումը հարկային մարմինների կատարելագործման այն կարևորագույն նախապայմաններն են որոնցից մեծապես

կախված են այս մարմինների առջև ծառացած խնդիրների հաջող և արդյունավետ իրականացումը: ԼՂՀ հարկային մարմինների աշխատանքներում առկա թերությունները բխում են այդ աշխատանքների ոչ հստակ կազմակերպումից և ղեկավարումից:

Խնդիր չհետազոտելով գիտական հիմնավոր վերլուծության ենթարկել հարկային մարմիններում տեղ գտած աշխատանքների ու կազմակերպման ու ղեկավարման տարաբնույթ եղանակները, այդուհանդերձ կարևոր ենք համարում անդրադառնալ մեր կարծիքով, բավականին սկզբունքային մի քանի հիմնախնդիրների:

Պետության կողմից հարկային մարմինների առջև դրված կարևոր և բազմաբնույթ խնդիրներ այդ մարմիններից պահանջում են մեծ պատասխանատվություն, առկա հիմնահարցերի և ծանխիթների հստակ պատկերացում: Այս առումով, հարկային մարմինների աշխատանքները առավել հստակ և արդյունավետ կազմակերպելու համար կարևոր ենք համարում տեղ դրանց հիմքում ընկած մի շարք կարևորագույն գործոններ՝

1. Հարկային օրենսդրական բազայի առկայություն,
2. Կադրային ճիշտ քաղաքականություն,
3. Հարկային օրինականության վիճակի վերլուծություն,
4. Աշխատանքների պլանավորում,
5. Հարկային մարմիններում իրականացվող աշխատանքների վերահսկում ու կառավարման հսկողությունը,
6. Հարկատուներին հարկային օրենսդրության պարզաբանումն ու պարզազանգումը,
7. Հարկային մարմինների ստորադաս ղեկավարների հաշվետվություն վերադասներին,
8. Հարկային պետական ծառայության հստակ և ներքի վարչատարածքային բաժանմամբ պայմանավորված կառուցվածքի առկայություն,
9. Նյութատեխնիկական նվազագույն ապահովվածության նրաշխիքներ առկայություն,
10. Այլ գործոններ:

Աշխատանքների կազմակերպումից, կազմակերպման ձևերից և մեթոդներից է կախված ցանկացած օղակի արդյունավետ գործունեությունը: Կազմակերպման հիմքում առկա տեսականորեն և գործնականորեն հիմնավորված գործոններն առկայումավետ գործունեության նախադրյալներ են հանդիսանում և հնարավորություն են տալիս ճիշտ սահմանել իրականացվելիք միջոցառումների ժամկետները, դրանք առհրաժեշտությունը կամ իրականացման ձևերն ու մեխանիզմները: Ի վերջո՝ գործող հարկային մարմինների աշխատանքների նպատակային իրականացման գործում կարևոր նշանակությամբ է օժտված բավարար օրենսդրական բազայի առկայությունը քառնգի առանց հստակ օրենքների և իրավական ակտերի, պարզապես անհնարին է աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու կատարումը:

Հարկային մարմինների աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործում կարևորվում է կադրային նպատակաուղղված քաղաքականությունը, քանզի այստեղ ներգրավված կոդքերը այն պաշտոնատար անձինք են, որոնք կոչված են իրականացնելու պետության հարկային քաղաքականությամբ թելադրված խնդիրները: Այսօր, անցման վրա գտնվող մեր նրկրի համար կարևոր են կադրերի ճիշտ ընտրության և ուսուցման սկզբունքները:

Հարկային մարմինների վրա դրված է պետության կողմից սահմանված պատասխանատու մի խնդիր էս, որին կառնում ենք անդրադառնալ: Խոսքը հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ առհրաժեշտ

հակադրության ապահովման մասին է: Այս առումով հարկային համակարգի աշխատակիցներին ներկայացվում են կոնկրետ պահանջներ:

Հարկային մարմինների աշխատակիցների նեղ մասնագիտական որակավորման հետագա կատարելագործումը, պրակտիկ աշխատանքի ընթացքում կուտակված փորձը, քաղաքական և բարոյական բարձր պատրաստվածությունը կարևոր նախադրյալներ են՝ այս համակարգի աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու, պետության կողմից նրա վրա դրված խնդիրներն իրականացնելու և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում պետական ֆինանսական կարգ ու կանոնի ապահովմանը հետամուտ լինելու համար:

Հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման մյուս նախապայմաններից է աշխատանքի պլանավորումը: Կարևոր նշանակություն ունեն աշխատանքային պլանները, որոնց առկայությունը թույլ է տալիս կազմել որոշակի ժամանակահատվածում իրականացվելիք միջոցառումների գրաֆիկ, որոշակիորեն համակարգել ԼՂՀ հարկային մարմինների վարչատարածքային միավորներում օրինականության ապահովման անհրաժեշտությունից բխող անհետաձգելի խնդիրները: Աշխատանքային պլանների բուցակադրության փաստը հանգեցնում է աշխատանքների լրացուցիչ ծանրաբեռնվածության, հնարավորություն չի տալիս հարկային տնտեսներին և նրանց վերադասին՝ արդյունավետ իրականացնել իրենց գործառնությունները:

Աշխատանքային պլանները կազմվում են՝ հարկային օրինականության և օպերատիվության սովորներից ելնելով: Դրանց նկատմամբ կիրառվում են մի շարք պահանջներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

Աշխատանքային պլանները պետք է լինեն՝

1. Հիմնավորված, այսինքն՝ բխեն օրենքներից և իրավական ակտերից,
2. Ժամանակագրական, այսինքն՝ ընթացիկ, կարճաժամկետ և հեռանկարային,
3. Հրատապ, այն է՝ բխեն օպերատիվ իրավիճակից (ուշացումով կազմված աշխատանքային պլանը ոչ միայն ժամանակավրժապ, այլև անարդյունավետ է դառնում),
4. Կոնկրետ, այն է՝ սահմանվեն պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները, իրավաբանական հասցեները և այլն,
5. Արդյունավետ, այսինքն՝ կազմված պլաններով պետք է սահմանվի, ապա նաև հիմնավորվի վերջիններիս արդյունավետությունը, այլապես վերանում է պլանավորման անհրաժեշտությունը:

Աշխատանքային պլաններին ներկայացվող պահանջները սերտորեն փոխկապակցված են և արյանաավորված են միմյանցով:

Այսպիսով, հարկային մարմինների համակարգում աշխատանքային պլանավորումը, ճիշտ իրականացվելու դեպքում, կարող է ունենալ կարևոր նշանակություն՝ նրանց աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու գործում: Կարևոր է կարողանալ ճիշտ կազմակերպել և կողորհնացնել աշխատանքները, դասավորակել դրանք ըստ բնույթի և բարդության, սահմանել կատարման պայմաններն ու ժամկետները, իրականացնել մշակված միջոցառումները. ահա հարկային մարմինների աշխատանքների պլանավորման էությունը, որն իրավացիորեն համարվում է անհրաժեշտ նախադրյալ՝ հարկային օրենսդրության պահանջների ապահովման գործում:

Հարկային մարմինների աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու գործում բացառիկ նշանակություն ունի նաև հարկային օրինականության միճակի վերլուծությունը, ըստ որում, այն պետք է իրականացնել նրկու հիմնական ուղղություններով: Առաջին՝ ավելի լայն իմաստով հարկային օրինականության

վիճակի վերլուծություն (այսինքն՝ հարկային օրենսդրության պահանջների խախտումների ընդհանուր վիճակի վերլուծություն): Այս պարագայում հարկային օրինակաբանության վիճակի վերլուծությունը ենթադրում է հարկային օրենսդրության պահանջների կատարման ընդհանուր քննարկում և ուսումնասիրություն, հարկային կարգապահության վիճակի քննարկում հիմնարկ-ձեռնարկություններում, հարկային սթրատեգիայությունների կատարման վիճակի ուսումնասիրում: Եվ երկրորդ՝ առավել տարածված հարկային իրավախախտումների, դրանք ծնող և դրանց տարածմանը նպաստող պայմանների ու պատճառների քննարկում:

Լրատվությանը, դրա ստացումն ու մշակումը կարևոր նախադրյալ են օրինակաբանության վիճակի ճիշտ վերլուծություն կատարելու համար: Կարևոր է նաև ստացված տեղեկատվության արդյունավետության ապահովումն ուսումնասիրության խնդիրը: Ենթադրենք՝ տեղեկություն է ստացվել, որ կազմակերպություններից մեկում տեղի են ունեցել հարկային օրենսդրության պահանջների կոպիտ խախտումներ, որոնցով էլ խոշոր չափերի վնաս է հասցվել պետությանը: Եթե տեղեկատվության տվյալ աղբյուրը հավաստի է, մատնանշում է հանցագործության օբյեկտը կամ սուբյեկտը, կամ լրատունն նախկինում ապացուցել է իր հաղորդած տեղեկությունների հավաստիությունը, ապա դրան հաջորդում է համապատասխան միջոցառումների իրականացում: Օրինակաբանության վիճակի վերլուծությունն իրականացվում է մի շարք նշանակներով: Դրանք են՝

1. Իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության բացահայտման, ստացման և մշակման նշանակ:
2. Ներգործության միջոցների ընտրման նշանակ (հաշվի առնելով հարկային օրինախախտման բնույթը, կրկնելիությունը և այլն):
3. Հարկային մարմինների տվյալ վարչատարածքային միավորում առկա տեղեկատվության բոլոր աղբյուրների և իրազեկության աղբյուրների հետ տարբերակված աշխատանքի նշանակ:

Հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման մյուս նախադրյալներն են՝ այդ մարմիններում վերահսկողությունը և ձեռնարկություններում, կազմակերպություններում հարկային հսկողությունը, որոնցից էլ կախված է հարկային տեսչությունների աշխատանքների արդյունավետությունը: Հարկային մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը հստակ սահմանված միջոցառումների մի համակցություն է, որն ապահովում է կատարման արդյունավետ հսկողություն, հարկային մարմինների բարձր կազմակերպվածություն, կարգապահություն, թելադրում է աշխատանքային լարված և պատասխանատու մթնոլորտ:

Վերահսկողության առարկաներ են՝ հանձնարարությունների և կարգադրությունների կատարման ամբողջականությունը, որակը և ժամկետները: Ելնելով հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման և գործունեության յուրահատկությունից, տարբերում են՝ վերահսկողություն օրենքների կատարման նկատմամբ և վերահսկողություն ստորադաս հարկային մարմինների աշխատակազմի գործունեության նկատմամբ: Ինչպես պետական կառավարման, այնպես էլ հարկային մարմիններում կարևոր նշանակություն ունի հսկողության ժամկետների սահմանումը, զոր պարտադրում է որոշակի ժամկետներում կատարել, ապա՝ գնելուց հսկողության կատարման մասին: Այս աշխատանքնակալը հնարավորություն է տալիս բարձրացնել հարկային համակարգի աշխատողների պատասխանատվության առտիճանը՝ հանձնաբերված գործի նկատմամբ, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ կատարված աշխատանքների վրա պատշաճ հսկողություն իրականացնելու համար: Վերահսկողության և կատարման հսկողության մեջ

ղրսևորվում է հարկային մարմինների գործունեության յուրահատկությունը, կենտրոնացվածությունը, խնդիրների և գործառնությունների միասնությունը և այլն:

Հարկային մարմինների աշխատանքները կազմակերպելու կարևոր նախադրյալ է նաև ստորադաս մարմնի և տեսուչների հաշվետվության մեխանիզմի առկայությունը: Հաշվետվությունը ենթադրում է կատարվածի, անելիքների կամ բացթողումների այն ամբողջական պատկերը, որը գեկուցվում է վերադասին: Հաշվետվություններն իրականացվում են նաև վիճակագրության տեսքով, այսինքն, թվերի ու փաստերի վերլուծությամբ, ներկայացվում է կատարված աշխատանքի պատկերը և տվյալ փառչական միավորի՝ հարկային մարմինների աշխատանքներում առկա օբյեկտիվ իրավիճակը:

Հարկային մարմինների աշխատանքների կազմակերպումն իրենից ներկայացնում է բավական քարդ կառուցվածք, որի իրավական բովանդակությունը քննորշվում է նրա վրա դրված հիմնական կարևորագույն մի գործառնությամբ՝ հարկային օրենսդրության պահանջների միատեսակ կատարման նկատմամբ հսկողության իրականացմամբ: Իսկ մեր երկրում հարկային օրենսդրությունն ու ռազմավարությունը հանդիսանում են արդյունավետ հարկային քաղաքականության իրականացման հիմքեր, որոնց նախնական մշակումն իրականացվում է ԼՂՀ գործադիր մարմինների կողմից:

СОЗДАНИЕ НАЛОГОВЫХ БЛАГОПРИЯТНЫХ УСЛОВИЙ В НКР

Т. С. Акопян

Резюме

Становление и развитие рыночного хозяйства, основанного на частной собственности, сопровождается расширением предпринимательской деятельности, созданием предприятий малого бизнеса, активизацией различных финансово-кредитных институтов, что способствует увеличению числа реальных налогоплательщиков. Расширение деятельности государства и быстрый рост его фискальных потребностей выдвинули задачу создания эластичной налоговой системы, которая могла дать подвижный источник доходов.

Кардинальные изменения в сфере налогообложения НКР сделали налоговую политику страны более гибкой, динамичной и адаптивной к быстро меняющимся условиям внешней среды. Это создало благоприятные условия как для отечественных, так и для зарубежных инвесторов.

Таким образом, налогообложение в экономической системе страны должно выполнять не только фиксальную функцию, но и быть многосложной и многоуровневой воспроизводственной подсистемой. Оно призвано быть оптимальным, создавать высокую заинтересованность предпринимателей и одновременно формировать накопления для расширенного воспроизводства квалифицированной рабочей силы.

PRODUCING FAVOURABLE TAXING CONDITIONS IN NAGORNO GARABACH REPUBLIC

Forming and development market economy based on private property is accompanied with expansion of business activity, working the enterprises of small business, activating of different financial-banking centres, which helping for increasing the quantity of real taxpayers. Importance of role Government and quick growing of its fiscal needs make also important creating of "rubber band" taxing system, which can supply movable sources of incomes.

Fundamental changes in taxpaying system of country transform the tax system of Karabach to much flexible and dynamic system, that can quickly adapt to the quik changes of external environment. This fact make real chances and excellent conditions for local and foreign investors.

Thereby, taxpaying process in the economic system of country must perform not only fiscal function, but also exist as a polysyllabic and layered reproductive subsystem. That must be optimal, motivate businessmen and enterprises and at the same time provide the high quality labour force for extended reproduction.